

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

- ✓ 2011թ. նոյեմբերի 7-12ը ՀՀ ԱՎԾ աշխատակազմի վիճակագրական աշխատանքների մեթոդաբանության և դասակարգիչների բաժնի պետ Լ. Պետրոսյանը մասնակցել է ք. Բեյրութում (Լիբանան) կայացած «Կանանց նկատմամբ բռնության վիճակագրության թողարկման ուղեցույցի մշակում» խորագրով խորհրդատվական հանդիպմանը,
- ✓ 2011թ. նոյեմբերի 24-25ը ՀՀ ՎՊԽ անդամ Յ. Պողոսյանը մասնակցել է ք. Կոպենհագենում (Դանիա) կայացած ԵՀԲԿ-ԲՏՄՀ Կառավարող կոմիտեի նիստին,
- ✓ 2011թ. նոյեմբերի 29-ից դեկտեմբերի 2-ը ՀՀ ԱՎԾ աշխատակազմի մակրոտնտեսական ցուցանիշների և ազգային հաշիվների բաժնի պետ Լ. Խաչատրյանը մասնակցել է ք. Կիևում (Ուկրաինա) կայացած «2008թ-ի Ազգային հաշիվների համակարգի ներդրում» աշխատանքային խորհրդակցությանը,
- ✓ 2011թ. դեկտեմբերի 5-9ը ՀՀ ՎՊԽ անդամ Գ. Անանյանը, ՀՀ ԱՎԾ պարենային ապահովության վիճակագրության բաժնի պետ Ա. Ավետիսյանը և նույն բաժնի գլխավոր մասնագետ Տ. Բաբախանյանը մասնակցել են ք. Հռոմում (Իտալիա) կայացած «Մատակարարում - սպառում» «հաշիվ, պարենային հաշվեկշռի մեթոդաբանություն» խորագրով սեմինարին,
- ✓ 2011թ. դեկտեմբերի 12-16ը ՀՀ ԱՎԾ աշխատակազմի տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման բաժնի պետ Ռ. Պետրոսյանը և վճարային հաշվեկշռի և արտաքին առևտրի վիճակագրության բաժնի գլխավոր մասնագետ Կ. Շահբազյանը մասնակցել են ք. Կիևում (Ուկրաինա) կայացած Կենտրոնական Ասիայի և Արևելյան Եվրոպայի երկրների համար EUROTRACE ծրագրային ապահովմանը նվիրված դասընթացին,
- ✓ 2011թ. դեկտեմբերի 14-15ը ՀՀ ԱՎԾ աշխատակազմի մակրոտնտեսական ցուցանիշների և ազգային հաշիվների բաժնի պետ Լ. Խաչատրյանը և գների վիճակագրության և միջազգային համադրումների բաժնի պետ Գ. Մարտիրոսյանը մասնակցել են ք. Մոսկվայում կայացած Միջազգային գլոբալ համադրումների ծրագրի շրջանակում ԱՊՀ տարածաշրջանի երկրների վիճակագրական ծառայությունների մասնագետների աշխատանքային սեմինար – խորհրդակցությանը: